

րութիւնը բարդ եւ իրապէս նուրբ արհեստ մըն է, առանց որուն հիւսուածեղէններ եւ գորգեր գոյութիւն չեն կրնար ունենալ: Ուայթըր Ս. Հասելէյ կը գրէ. «Ներկ պատրաստելու արուեստին չափ գրեթէ, կարելոր է ներկը հարկ եղած կերպով թելերուն փոխանցել: Արուեստ մըն է որ կը պահանջէ անհուն, տաժանելի արհեստագիտութիւն, ամբողջ կեանք մը ձեռք բերելու համար համութիւն: Ինքնուրոյն բարձր գրազում մըն է վարպետներէ կիրարկուած, որոնք նախանձախնդրութեամբ կը պահեն իրենց արհեստին գաղտնիքները եւ սերունդէ սերունդ կ'աւանդեն, ամէն բանէ աւելի անոնց ուշադրութիւնը գրաւելով: Ներկարարներու տուները մեծ զիւղերու եւ քաղաքներու մէջ հաստատուած կ'ըլլան ջուրի հոսանքներու վրայ, որոնք կը պարունակեն հանքային նիւթեր որոնք երկար փորձառութեամբ յատկապէս յարմար եւ լուծիչ դատուած են, իրենց զանազան ներկերուն համար: Անոնց ցած բնակարաններուն պատերուն երկայնքը շարուած կան կարասներ կամ ամաններ, զանազան գոյներ պարունակող հեղուկ նիւթերով: Իսկ անոնց վրայ առկախեալ կան կոճղերու վրայ միտուած կետեր, որոնցմէ կը կախուին իրենց գոյնին յատուկ ամաններուն մէջ մխրճուած թաց թելերու խուրճեր, այսպէս թույլ տալով որ հեղուկը քամուի: Ասկէ վերջ, որոշ ժամանակ մը թելերը կը ցուցադրուին չոր օդին եւ խանձող արեւին: Ուրեմն գոյներու գաղտնիքը յարմար թթուանքէ յատուկ ներկամաններու մէջ ներկերու պատրաստութիւնն է, յետոյ ճիշդ յաջորդականութեամբ բուրդի թելերուն մխրճումն է որոշ ժամանակի ընթացքին. հուսկ՝ արեւուն ջերմութեան եւ շողին ցուցադրուին է որոշ ատենի մը համար, բան մը որ վայրկեանը վայրկեանին պէտք է կատարուի: Այս բարդ միջոցներով կարելի է, օրինակի համար, իրարմէ մեծապէս տարբերող կարմիրի, կապոյտի կամ թխագոյնի երանգներ գոյացնել նոյն ներկերով, բայց քիչ մը փոփոխուած աստիճաններով, բան մը որ կը պահանջէ խիստ զգուշութիւն եւ որուն համար կանոն չկայ, բացի փորձառութենէ՝ որ բնութեան վերածուած է առաջնորդելով ներկարարը»⁽²⁴⁾:

Արեւելքի ներկարարներու մասին տրուած այս քիչ մը ընդհանուր տեղեկութիւնները կարելի է նաեւ հայ ներկարարին վերագրել: Սակայն մենք ունինք յատկապէս հայ ներկարարին համար ալ տրուած տեղեկութիւններ: «Ներկարարներ կան բոլոր քաղաքներում եւ մեծ զիւղերում: Ներկարանում, ուր գործում է վարպետը մի քանի օգնականներով կամ ընկերակիցներով, գտնուում են մի շարք մեծ կարասներ, որոնք թաղուած են մինչեւ բերանը: Այդ մեծ կարասներում միշտ պատրաստ ներկ է լինում, որը ժամանակ առ ժամանակ նորոգւում է (թարմացնում է): Ներկարարը ստանում է մասնաւոր միւշտարիներից (յաճախօրք) կամ վաճառականներից կտաւի կամ բրդի

(24) Oriental Rugs. New York, 1927, p. 42-43.